«Բարձունքների հաղթահարում» նախագիծ

Սյունքի մարզի Ծղուկ բարձունք

Առաջարկություն

«Բարձունքների հաղթահարում» նախագծով Միջին և Ավագ դպրոցների սովորողների մի խումբ պատրաստվում է բարձրանալ Սյունքի մարզի Ծղուկ բարձունքը: Այնտեղ բավական վերջերս հայտնաբերվել են 16 000 տարեկան հնություն ունեցող բազմաթիվ ժայռապատկերներ, որոնք չնայած դեռ ամբողջությամբ ուսումնասիրված չեն, բայց բավական հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի հնագույն պատմության ու մշակույթի մասին:

Աշոտ Տիգրանյանի ղեկավարությամբ սովորողները բավական ուսումանսիրել են այդ հնավայրի հետ կապված տեղեկությունները: Պետք է ասեմ, որ վերջերս լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էլ է այդ հնավայրը:

Հնավայրի ուսումնասիրությամբ զբաղվող խմբի ղեկավարը Սամվել Շահինյանն է, որը ոչ միայն երկրաֆիզիկ է, այլ նաև քարանձավագետ է: Էկոլոգիայի վերաբերյալ էլ բավական շատ աշխատություններ ունի հրապարակած:

Միջին դպրոցի սովորողները կարդացել ու անգամ վերլուծել էին Սամվել Շահինյանի աշխատություններից:

Ես, որպես «Բարձունքների հաղթահարում» նախագծի պատասխանատուներից մեկը, խոստացել էի օգնել այդ խմբին իրենց նախապատրաստական, ուսումնահետազոտական աշխատանում և հանդիպում կազմակերպել Սամվել Շահինյանի հետ:

Նախնական պայմանավորվածություն արդեն ձեռք ենք բերել: Ես խոսել եմ նրա հետ, ներկայացրել կրթահամալիրն ու բացատրել, թե ինչպես են կազմակերպվում ուսումնական աշխատանքները մեզ մոտ:

Սամվել Շահինյանը բավական պատրաստակամորեն համաձայնեց գալ կրթահամալիր և անգամ հնարավորության դեպքում պատրաստակամություն հայտնեց ուղեկցել խմբին Ծղուկ բարձրանալիս:

Նախնական պայմանավորվածություն ենք ձեռք բերել հանդիպումը կազմակերպել Ավագ դպրոց վարժարանի ակումբում: Դեռ մի քանի շաբաթ առաջ տիար Գևորգի հետ խոսել եմ, նա իր համաձայնությունը տվել է ակումբում այդ հանդիպումը կազմակերպելու համար: Բայց քանի որ Ս. Շահինյանը քննությունների էր, անընդհատ ձգձգվում է հանդիպումը:

Հանդիպումն ուզում ենք կազմակերպել **երեքշաբթի՝ 15:00**: Կրթահամալիր գալիս նա իր հետ կբերի տեսաֆիլմեր Ծղուկի մասին ու հրապարակված նյութեր, որոնք սովորողներին ավելի շատ ինֆորմացիա կտան հնավայրի մասին:

Խնդրում եմ մեքենա տրամադրել նրան Ճարտարաշինական ինստիտուտից կրթահամալիր բերելու համար:

Խնդրում եմ ձեր կարգադրությունը: